



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևացափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16559
1944-4
L. ԿԱԶԱԿՈՎ


ԿՈԼԽՈԶՆԵՐԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ՅԵՎ ԱԹԽԱՑԱՆՔԻ ՎԱՐԺԱՑՐՈՒՄ

ՀԱՐՑԵՐԸ

ՊԵՏՀԱՆԱԿ-1930-ՅԵՐԵՎԱՆ





Լ. ԿՈԶԱԿՈՎ


338.1K

4-

ԿՈՂԻՈՒԶՆԵՐԻ
 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
 ՅԵՎ
 ԱԹԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ
 ՀԱՐՑԵՐԸ

Ազատ քարգի. լուսապատճենով
 Ն. ԿՈՒՐԴԻՆԵԱՆ

A 3294



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1930

Գրառեալիար № 3073 (ր)

Պատվեր № 232 Հրամ. № 1199 Տիւած 5000

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր կոլխոզինարարության թափի աբազորեն առաջընթացումը, ամբողջ շբջանների և դավանների համատարած կոլխեկտիվացումը սեր առաջ դնում են նորանոր բարդ և կարևոր խընդիրներ։ Պակաս կարևորագույն նշանակություն չունեն կոլխոզների վարչական կազմակերպչական և աշխատանքի վարձատրման հարցերը։

Ճիշտն ասած՝ մեր կոլխոզների հետ կապված մյուս խնդիրները հիմնալես կապված են կամ բղխում են այս հարցերից։ Այժմ յուրաքանչյուր ակտիվ աշխատող, կոլխոզի անդամ շատ իրավացի կերպով դնում ե այս հարցերը և պահանջում պատասխան։

Բնկ. Կազմակովք այս գիրքը տալիս ե այդ հարցերին փոքրիշատե ձեավորված պատասխաններ։

Նկատի ունենալով նաև մեր գյուղականիվե պահանջը, իսկ մյուս կողմից այդ ուղղությամբ հայերեն գրականության բացակայության փաստը, անհրաժեշտ համարվեց լույս ընծալել ընկ.

Կազակովի այս գիրքը հայերեն լեզվով։ Մյուս
կողմից՝ լենելով մեր պահանջներից և գրքի
մասսայական-մատչելի լինելուց, թարգմանելիս
կատարվել են վարոշ կրճատումներ։

Ընկ. Կազակովի գրքի լույս տեսնելուց հե-
տո հրատարակված վորոշումները մացվել են գըր-
քի մեջ իբրև ծանոթություններ։

Ե.

I. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքի կազմակերպումն ու նրա վարձատրությունը ներկայումս կոլխոզներում ունեն խոշոր նշանակություն վոչ միայն գյուղատնտեսական մեծ արտադրանքի ճիշտ կազմակերպման տեսակետից, այլև նրանով, վոր նրանք բավականաշափ բնորոշող են կոլխոզի կյանքն ու նրա անդամների փոխհարաբերությունը։

Կոլխոզն իր խոշորացմամբ վերածվելու լեզուանանտեսական մթերքների և հումուրիթի գործարանի։ Աշխատանքի կազմակերպումը նըրանում հետզհետե մոտենալու լեզուարանային կազմակերպության, այսինքն խորհրդային տնտեսության։ Այսպիսին ե կոլխոզների զարդացման ուղին։ Խորհրդային անտեսությունների աշխատանքի կազմակերպման փորձը պետք է հաշվի առնել և ոգտագործել կոլխոզների համար։ — «Ի՞նչ ե, գուք ուզում եք մեզ դարձնել «մշակներ» և «վարձվողներ», — կարող են առարկել կոլխոզների անդամները, յերբ նրանց առաջարկում են կազմակերպել աշխատանքը խոր-

հըրդալին տնտեսության նման։ Կազմակերպիչ-ները պետք եւ տանեն մեծ բացատրական աշ-խատանք, որինակներով պիտի ապացուցեն աշ-խատանքի կազմակերպման նոր ձեերի տռավելությունները, գտնեն փոխանցման աստիճան-ները, տանեն ավելի սլարդ ձեերից դեպի ավե-լի բարդ և կազմակերպված ձեերին։ Աշխատան-քի կազմակերպման ինդրում ողտագործելով խորհրդալին տնտեսությունների փորձը, չի կա-րելի մոռացության տալ նաև կոլխոզների ա-ռանձնահատկությունները։

Աշխատանքի կազմակերպումը կոլխոզնե-րում, ինչքան ել նա սկզբնական շրջանում պարզ և անկատար լինի, սկսած եւ աջակցի հա-մայնական տնտեսության զարգացմանն ու ամ-րագնդմանը։

Կազմակերպիչը պետք եւ կարողանա գըտ-նկ աշխատանքի կազմակերպման նորանոր ձե-վեր համայնացված արտադրության տեխնիկա-կան բազայի փոփոխման, համայնացման անման, բանվորական ուժի կազմի փոփոխման, նրա վա-րակավորման, գիտակցության և կոլխոզներում ընդգրկված գլուղակական մասսաների կուլտու-րական մակարդակի բարձրացման հետ միասին։ Հասարակական աշխատանքի արտադրողականու-թյունն ու սոցիալիստական կուտակման աճումը՝

կախված աշխատանքի ճիշտ կազմակերպման
հետ, ներկայումս հանդիսանում են կոլ. շինա-
բարության առաջադիմության հիմնական ցու-
ցանիշները:

II. ԿՈԼԽԱԶՆԵՐԻՄ ԳՈՅԾԱԹՅՈՒՆ ՌԴՆԵՑՈՂ ԱՅԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՅԱ. ԿԱՆ ՈՒ ՅԵԿԱՄՏԻ ԲԱԾԽՈՒՄԸ

Կ. ՀԽՍՈԳՆԵՐՈՒՄ գոյություն ունեցող աշխա-
տանքի կաղմակերպման բացերն են՝

1. Աշխատանքը հավասարաչափ չի բաշխ-
վում կոլեկտիվի մեջ մտած առանձին ընտա-
նիքների միջև։ Թանի վոր աշխատանքի վարձը
դեռևս հիմնական միջոցն եւ հանդիսանում ա-
ռանձին անդամների միջև լեկամուտը բախելու
գործում, իսկ աշխատանքի անհավասարաչափ
բաշխումն աղբյուր եւ հանդիսանում անզամնե-
րի նյութական անհավասարության։

2. Կոլխոզների մեծամասնության մեջ բա-
ցակայում եւ բանվորական ուժի բաշխումը ըստ
մեայունի յեվ փոփոխականի, վորն իր հերթին
դժվարացնում եւ կ. ՀԽՍՈԳՆԵՐԻ անդամների մաս-
նագիտացման և վորակի բարձրացման գործը։
Կոլխոզների զգալի մասն իր աշխատանքները
կատարում եւ «հերթով», աշխատողներն ամ-
բացված չեն տնտեսության վորոշ ճյուղին, այլ

նետվում են մի ճյուղից մյուսը, մի աշխատանքից մյուսը։ Այն պարզ կոլխոզներում, վորտեղ համաձայնեցված ե օիայն դաշտավարությունը՝ թուլ մեքենացմամբ, աշխատանքի թուլ բաժնմամբ, բանվորական ուժի նման բաշխումը դեռևս տանելի յեւ իսկ անտեսության մեջ զարգացած ճյուղեր ունեցող կոլխոզներում, արտադրության բարդ և թանգարժեք միջոցներով (մեքենաներով), մեծագույն չափով համայնացմամբ, նման դրությունը միանդամայն անթուլատրելի յեւ ինչո՞ւ. վորովինետև այդ դժվարացնում և վորակյալ բանվորական ուժի գործադրումը, աշխատողների վորակավորման բարձրացումը, իշեցնում ե հետաքրքրությունը դեպի իրենց աշխատանքի վերջնական արդյունքները և, վերջապես, անպատճանատու դարձնում հանդեպ իրենց հանձնած աշխատանքն ու զործիքները։ Այս բոլորն առաջ են բերում աշխատանքի արտադրողականության նվազում, բարդ և թանգարժեք մեքենաների անհաղատականացմաք ուղտագործում և փչացում։

3. Կոլխոզների մեծամասնության մեջ բացակայում ե աշխատողների տարիքիկացիան—աշխատանքի կամ կատարածի վորակական գընահատումը։ Այդ դեպքում բոլոր աշխատանքները միարժեք են համարվում։ Զարիի համար

միավոր հանդիսանում ե բանվորական որը։ Մի-
աժամանակ հաշվի չի առնվում զոչ միայն վո-
րակը, այլև աշխատանքի լարվածությունը բան-
վորական որվա ընթացքում։ Աշխատանքի վորա-
կապես գնահատման բացակայությունը և բո-
լոր աշխատանքների գնահատականը մի հայտա-
րարի բերելը պատճառ ե դառնում վորակյալ
ուժերի հեռացմանը կոլխոզից, արգելք և հան-
դիսանում մասնագետների ներգրավմանը և յե-
ղած բանվորական ուժի վորակի բարձրացմանը,
դցում և աշխատանքի արտադրողականությունը,
վորովհետև շահագրգոռություն չի առաջացնում
աշխատանքի մեջ վորակալին հետևանքների հաս-
նելու գործում։

4. Կոլխոզների խոշոր մեծամասնության
մեջ բացակայում են արտադրանքի նորմաները,
մինչդեռ սրանք հիմնական միջոցներ են աշխա-
տանքի կարգավորման գործում։ Արտադրանքի
նորմաներ ունենալը պարագիր ե կոլխոզների
տնտեսության մեջ։ Սրա բացակայությունն ար-
գելք և հանդիսանում աշխատանքալին զիսցիպ-
լինայի, աշխատանքի արտադրողականության
բարձրացմանը։ Արգելք և հանդիսանում բանվո-
րական ուժի և գործիքների ոգտագործման հա-
շիվների կայունացմանը, հետևապես խախտում ե
տնտեսությունը ծրագրալին ձեռվ աանելու հիմքը։

5. Բազմաթիվ կոլխոզներում չեն գործադրվում այնպիսի ձեռնարկումներ, վորոնք կարող են զարկ տոլ կոլխոզի ամեն մի անդամաշխատողի անձնական շահագրգութությանը։ Այս բացի վերացմամբ (պարզեատըում) կոլխոզի յուրաքանչյուր աշխատող կբարձրացնի իր աշխատանքի արտադրողականությունը և արտադրանքի վորակը։

6. Կոլխոզներում թույլ ե ոգտագործվում յեղած բանվորական ուժը (կոլխոզների «բանվորական ուժի ավելցուկի» խնդիրը)։ Թույլ ե ոգտագործվում կանացի աշխատանքը, իսկ վորոշ դեպքերում ել հետզհետե դուրս ե քշվում տղամարդու աշխատանքը (մեքենատրակտորալին կայանների շրջանում)։

7. Մի շարք կոլխոզներում չեն կիրառվում պատժիչ սիջոցները (նյութական պատասխանատվության հիման վրա) հանդեպ նրանց, ովքեր չեն լենթարկվում աշխատանքային կարգապահության, չեն արտադրում իրենց համար սահմանված նորման, սառը կամ չարամիտ վարմունքի հետևանքով փչացնում են մեքենաները (նման լերևույթներ կարող են կատարվել կոլխոզի մտած կուլակային ելեմենտների կողմից)։

8. Շատ կոլխոզներում դեռևս գոյություն չունեն արտադրական խորհրդակցություններ։

Չպետք եւ մոռանալ, վոր արտադրական խորհրդակցությունները շատ մեծ անհղիքներ ունեն:

9. Վոչ մի կոլխոզ չի դբաղվել յերիտասարդությունից վորակյալ բանվորական ուժ պատրաստելու հարցով: Զի տարված աշխատանք մեծահասակ աշխատողների վորակի բարձրացման ուղղությամբ:

10. Շատ կոլխոզներում չեն կարգավորված անդամների աշխատանքի պահպանման հարցերը:

11. Համարյա տմենուրեք թույլ եւ դրված (կամ բացակայում ե) աշխատանքի հետեանքների հաշվառման գործը:

Յեկամտի բաշխումը միշտ ել կապված չի աշխատանքի կազմակերպման և վարձատրման հետ: Բայց բոլոր դեպքերումն ել ունի հիմնական, վճռական նշանակություն ամբողջ կոլխոնարարության ամրացման և զարգացման համար, մասնավորապես աշխատանքի արտադրողականության հարցի վճռման համար: Բաշխման սիստեմի բացերն արտահայտվում են՝ ա) աշխատանքի արտադրողականության և վորակի վրա, յերկրորդ՝ կուտակման չափի, հետեապես համայնացման թափի և արտադրության աճման վրա, յերրորդ՝ կոլխոզի անդամների հասարակականարտադրական փոխհարսերությունների վրա:

Կոլխոզներում գորություն ունեցող յեկատարի բաշխման ձևերը տարբեր են, բայց բոլորը հանգում են հետեւալ չորս ձևին.

1) Բաշխումն ըստ սպառման (ըստ շնչի),
 2) ըստ աշխատողների, 3) ըստ միացրած կամ
 ծախսված արտադրուկան միջոցների (հողի, կենդանի կամ մեռլալ ինվենտարի), 4) ըստ գործադրված աշխատանքի։ Ամենից հաճախ գործադրվում ե բաշխման խառը ձեւ—ըստ շնչերի և
 ըստ գործադրված աշխատանքի, հաշվի առնելով կոլխետիվի անդամների կողմից միացրած արտադրության միջոցները և այլն։

Բաշխման սխտեմն ըստ սպառման կիրառվում ե կոմմունաներում և արտելներում, վարտեղ ամենից շատ են համայնացված արտադրության միջոցները։ Բայց ներկա պայմաններում, յերբ արտադրողականությունը դեռևս թույլ ե զարգացած, թույլ ե կոլխոզների տեխնիկական մակարդակը, դեռ շատ ցածր ե կոլխոզի անդամների կուլտուրական մակարդակը և աշխատանքի արտադրողականությունը, վորի պատճառով բաշխման ձևն ըստ սպառման կիրառել ամբողջովին հնարավոր չե։ Այս ձևի հիմնական բացը կայանում է նրանում, վոր սրա կիրառման դեպքում բացակայելու յե յուրաքանչյուր անդրմի անձնական շահագրգովածությունն իր

իսկ աշխատանքի արդյունքների նկատմամբ։
 Այս ձեզ կտանի դեպի աշխատանքի ցածր ար-
 տադրողականություն և դեպի լուրատեսակ շա-
 հագործում ցածր գիտակից անդամների կողմից
 հանդեպ ավելի գիտակից և բարեխիղճ անդամ-
 ների։ Յուրաքանչյուր անդամ, յերբ գործադր-
 վում ե բաշխման այս ձեզ, տեղի յե ունենում
 հավասարեցումը վոչ թե դեպի լավ, այլ ավելի
 վատ աշխատողը։ Առաջանում են սկլոկաներ,
 թյուրիմացություններ և այլն, վորից և կոլխո-
 զի թուլացում, քայլացում։ Պետք ե վերջապես
 առաջ բերել այնպիսի դրություն, վոր կոլխոզի
 ամեն մի անդամ նյութապես շահագրգոված լի-
 նի և ըստ այնմ ել կատարի իր վրա դրված աշ-
 խատանքը կոլխոզում։ Այս սիստեմը հնարավոր
 ե գործադրել այն դեպքում, յերբ կոմմունան
 կամ կոլխոզը կազմված են միատարր-գիտակից
 շատ մոտիկ և բարեխիղճ անդամներից։ Համե-
 նայն դեպս, սա հնարավոր ե ներկայումս հա-
 մեմատաբար շատ քիչ կոլխոզներում։

Բաշխումն ըստ աշխատողների ֆիչ ե տար-
 բերվում սպառողականից (ըստ շնչերի) և հան-
 դիսանում ե նրա վորոշ ձևափոխումը։ Բայց
 և այնպես սա մի քայլ առաջ ե դեպի բաշխու-
 մը ըստ գործադրված աշխատանքի ձեի, մանա-
 վանդ այն դեպքում, յերբ աշխատանքն ավելի

հավասարաշափի ե բաշխված աշխատողների միջև։
Համենայն դեպս այս ձեռն ել անընդունելի լե և
շատ քիչ ե տարբերվում նախկինից։ Յեթե կոր-
խոզի տվյալ անդամի աշխատանքը 1 ու կես—
2 անգամ ավելի արտադրողական ե մյոււներից,
վերցրած առանձին-առանձին, բայց ըստ աշխա-
տողի բաշխման դեպքում տվյալ անդամը վար-
ձատրվում ե բոլորի չափ։ Ինչպես նախկին ձե-
վով, այստեղ ել ստացվում ե հավասարեցում
վոչ թե դեպի լավը, այլ դեպի կոլխոզի վատ
անդամը կամ միջակը և սրանից ել կոլխոզի աշ-
խատանքի ցածր արտադրողականություն։

Բաժինումն ըստ միացրած արտադրանքի մի-
ջոցների շատ քիչ ե պատահում և այն ել այն
կոլխոզներում, ուր թույլ ե կատարված համայ-
նացումը։ Այս ձեռը հնարավոր ե դարձնում կոլ-
խոզում շահագործումը—արտադրական միջոց-
ներ ունեցողները շահագործում են չունեցող-
ներին։ Սրա հետևանքով նյութական անհավա-
սարություն ե ստացվում կոլխոզում։ Դեռ ավե-
լին, ոգտագործել կոլխոզն իբրև միջոց՝ ամրաց-
նելու համար անհատական տնտեսության սեկ-
տորը կոլխոզի ներսում։ Յեկամտի բաշխման
այս ձեռը հնարավոր ե դառնում կիրառել կեղծ
կոլխոզներում կամ այն կոլխոզներում, ուր
մուտք են գործել կուլակային ելեմենտները։

Բաշխման այս ձեն իբրև միանգամայն սխալ և
դաստկաբայնորեն անճիշտ, յերբեք ել ընդու-
նելի չե: Այս դեսլքում ոգտվում են վոչ թե չը-
քավորներն ու սլարտաճանաչ աշխատող միջակ-
ները, այլ քայլքալիչներն ու կոլխոզն իրենց շա-
հերի համար ծառայեցնել ցանկացողները: Այս
ձեն իբրև միասակար, յերբեք ել գործադրելի չե:

Ապրուսի միջոցների բաւխումն ըստ գոր-
ծադրված տէխատանքի քանակի յեվ վլորակի
ամենալավ և ընդունելի ձեն ե: Ապրուստի մի-
ջոցները հակադրվելով քանակալես և վլորակա-
պես գործադրված աշխատանքին, հանդես են
գույս այստեղ իրեվ տէխատանքի վարձատը-
րություն: Միայն այս ձեն ե, վոր տարբերվե-
լով մյուսներից, շահագրգոռում ե կոլխոզի յու-
րաքանչյուր անդամին իր աշխատանքի արդյուն-
քով, կարգապահ ե դարձնում կոլխոզի անդամ-
ներին, բարձրացնում ե նրանց պատասխանա-
տվությունը հանդեպ իրենց պարտականություն-
ների: Այս ձեի ճիշտ կիրառումը հնարավորու-
թյուն կտա առաջացնելու կուտակում արտա-
դրության միջոցների համայնացման գծով և հե-
տքհետեւ ուժեղացնելով վերջինիս տեսակարար
կշիռը՝ կարագացնի արտադրության բոլոր մի-
ջոցների համարնացումը: Կոլխոզշարժման ղեկա-
վար որդանները պետք ե ձգտեն վերացնելու

գոյություն ունեցող բաշխման ձևերի բազմատեսակությունը, վերջ տան ամեն տեսակի սպառողական ձևերին, վորոնք չեն նպաստի աշխատանքի արտադրողականության և կարգապահության բարձրացմանը։ Ամենուրեք և բոլոր տեսակի կոլխոզներում պետք է անցկացնել յեկամըտի բաշխման ձևը (ավելի ճիշտ՝ ապրուստի միջոցները) ըստ վործադրված աշխատանքի քանակի և վորակի։

Այս ձեփի գերակշռումը պիտի ապահովել նաև տնտեսական ճնշման միջոցներով (վարկերի և մեքենաների բաց թողնելն առաջին հերթին այն կոլխոզներին, վորոնք անցել են բաշխման այս ձեփին)։

III. ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՓՈՔԻ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Կոլխոզների վարչական կազմակերպումը սերտորեն կապված է տնտեսության կազմակերպման հետ (տնտեսության ճյուղերի բաժանումը, ոժանդակ ձեռնարկներ և այլն)։

Փոքը կոլխոզներում գոյություն ունեցող վարչական կառուցվածքը (ընդհանուր ժողով, կոլխոզի խորհուրդ, նախադահ) պրակտիկայում

իրեն արդարացը և հաղիվ թե կարիք զգա վո-
 րեւ փոխուման։ Բայց պրակտիկայում նպատա-
 կահարմար վարչական կազմակերպումը փոքր
 կոլխոզներում շատ դեպքերում չի լրացվում աշ-
 խատանքի նպատակահարմար կազմակերպումով
 և աշխատանքների ղեկավարումով։ Շատ կոլ-
 խոզներում, նույնիսկ ամենափոքր, ուր համայ-
 նացված են արտադրության միջոցները, ան-
 խուսափելիորեն կատարվելու յե աշխատանքի
 բաժանման հետ միասին տնտեսության ճյուղե-
 րի առանձնացում (դաշտավարություն, անաս-
 նաբուծություն, բանջարաբուծություն, ոժան-
 դակ ձեռնարկներ և այլն)։ Տնտեսության յու-
 րաքանչյուր ճյուղ ղեկավարելու յե վարիչը՝ նը-
 շանակված խորհրդի կողմից (և վոչ թե ընդհա-
 նուր ժողովում ընտրված, ինչպես հաճախ լի-
 ցնում ե)։ Առանձին դեպքերում իրըև վարիչներ
 կարող են հրավիրվել գործին ծանոթ կամ մաս-
 նակետ և վոչ կոլխոզի անդամներ (վարձով)։
 Պարզ ե, վոր ընդհանուր ժողովը կարող ե ա-
 ռարկել ստորին վարչակազմի այս կամ այն
 հատի դեմ։ Դա ընդհանուր ժողովի իրավունքն
 ե։ Փոքր կոլխոզներում առանձին ճյուղերի վա-
 րիչները, տանելով վարչական աշխատանք, չեն
 ազատվում տնտեսության տվյալ ճյուղում աշ-
 խատելուց։ Յերբ կոլխոզը մեծանում ե, աշխա-

տանքները բարդանում են, վարիչները կարող են ազատվել ֆիզիկական աշխատանքից մտնակի կամ ամբողջովին:

Հետագայում, յերբ աշխատանքներն ավելի յեն բարդանում, աշխատանքը կազմակերպվում ե, պահանջ ե ղգացվում առաջադրել ավագ բանվորներ՝ վարիչներին անմիջականորեն յենթակա:

Խորհրդի անդամներից, աշխատանքի բաշխման կարգով, նրանցից յուրաքանչյուրը ղեկավարում ե տնտեսության մի կամ միքանի ճյուղ։ Այն ղեղքում, յերբ խորհրդի անդամը ղեկավարում ե մի ճյուղ, հենց նա յել հանդիսանում ե այդ ճյուղի վարիչը։ Իսկ այն ղեղքում, յերբ խորհրդի անդամը ղեկավարում ե տնտեսության միքանի ճյուղ, այն ժամանակ ամեն մի ճյուղ ունենալու յե իր վարիչը։

2. ՎԱՐՉՈԿՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱԼԽՑՅԱՆԻ ԽՄԲԱԿՑԻՆ ՄԻԾՎԱՐՆԵՐՈՒՄ

Խմբակալին միավորում լինում ե յերկու տեսակի։ 1) Գոքը կոլխոզների խմբակալին միավորում, իբրև միջանկատը, անցողակի ձև փոքր կոլխոզից ղեղի մեծը և 2) խմբակալին միավորում մեծ կոլխոզների՝ կազմակերպված կապիտալ շինարարության համար մեծ մասշտաբով

(Ելեկտրոկայաններ), ուժեղ ջրաղացներ, ելեկտրագումաններ, գյուղատնտեսական հումուզի վերամշակման խոշոր գործարաններ և այլն):

Յերկրորդ տիպի միավորումներ հնարավոր են սպազայում, յեթե միայն պետական արդյունաբերությունը իր վրա պարտականություն չի վեցնի ձեռնարկելու խոշոր արդյունաբերական ձեռնարկումներ, վորոնք սպասարկելու յեն համատարած կոլեկտիվացման ամբողջ տարածություններ։ Ներկայումս մեծ չափով տարածված են միավորումների առաջին ձեերը։

Հենվելով գոյություն ունեցող կոլխոզների ցանցի, տեխնիկական ձեռնարկների և եներգետիկ բազայի վրա, խմբակային միությունն իր առաջ հիմնական խնդիր ե դնելու—շրջապատող գյուղացիական տնտեսությունների համատարած կոլեկտիվացումը, համատարած կոլեկտիվացման շրջանի տեեղծումը և գոյությաւն ունեցող զանազան ձևի կոլխոզների փոխանցումը միասնական տնտեսության՝ արտադրության հիմնական բոլոր միջոցների համայնացմամբ (խոշոր կոլխոզ կոմբինատ): Համաձայն սբախմբակային միավորման կանոնադրությունը մշակելիս, խըմբակալին միությանը պետք ե ապահովվի վոչ միայն նրա մեջ մտնող կոլխոզների կազմակերպչական և գյուղատնտեսական սպասարկումը, վոչ

միայն ղեկավարությունը խմբակալային տեխնիկական ձեռնարկութերի, այլև ոպերատիվ տընտեսական ֆունկցիաներով, վորոնք ապահովելու յեն միության մեջ մտնող կոլխոզների ընդհանուր տնտեսական ղեկավարումը (մասնակցումն առանձին կոլխոզների կազմ-արտադրական ծրագրերի մշակելուն, նրանց հաստատելը, դրանց կատարման վրա հսկելը և այլն):

Խմբակալին միության վարչական կառուցվածքի սխեման հետեւալն ե՝

Լիազորական ժողովը, խմբակի խորհուրդը, խմբակի վարչությունը։ Լիազորական ժողովը հրավիրվում ե տարին մեկ անգամ՝ քնննելու արտադրական պլանը, խորհրդի, վարչության և վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունների համար։

Անհրաժեշտ դեպքում վերին որգանի, վերստուգիչ հանձնաժողովի կամ խորհրդի պահանջման դեպքում կարող ե հրավիրվել նաև արտադրական լիազորական ժողով։

Խոշոր կոլխոզների կազմակերպչական կառուցվածքը շատ քիչ ե տարրերվելու խմբակալին միության կառուցվածքից։

ԾԱՆՈԹ. — Համաձայն Համկոմկուսի կենտկոմի վերջին վորոշութերի, կոլխոզների վարչական կառուցվածքը յենթարկվում ե

զիւլի փոփոխությունների։ Այն շրջաններում, ուր կատարվում է համատարած կոլլեկտիվացում, կազմակերպվում է կոլխոզ շրջանային միություն, կազմակերպչական, ագրո-արտադրական և ռաֆերատիվ (գործառնական) ֆունկցիաներով։ Այս դեպքում խմբակային միությունը զրկվելու յեր բոլոր ֆունկցիաներից ունենալով միայն տնտեսական-միավորման ֆունկցիաներ։ Իսկ այն շրջաններում, ուր դեռևս համատարած կոլլեկտիվացում չի անցկացվում, այդ շրջաններում զբուղկոոպերացիայի արտադրական շրջմիություններին կից կազմակերպվում են ավտոնոմ կոլխոզներցիաներ, իրենց դեկավարման որգաններով և համապատասխան ֆունկցիաներով։ Համապատասխան ձեռվ ել կազմակերպվում են հանրապետական մասշտաբով՝ մասնագիտական կոռպմիություններին կից։ Հայաստանի կոմկուսի կենտկոմի վորոշմամբ այդեղործական-պտղա-բանջարաբուժական և բամբակագործական միությունները վերածվել են համապատասխան կոլլեկտիվ միությունների։ Առաջին միության կից կազմակերպվել են կոռպերատիվ ավտոնոմ սեկցիա։ Իսկ անասնաբուժական և հացագործ միություններին կից կազմակերպված են կոլխոզ ավտոնոմ սեկցիաներով։ Հացահատիկային և անասնաբուժական շրջանների կոլլեկտիվացման հետ զուգընթաց այս միություններն

ել վերածվելու յին կոլխոզմիությունների։
Պետք են կատի ունենալ նաև այն, վոր կոլ-
խոզկենտրոնն ազատված ե ոպերատիվ
ֆունկցիաներից։ Աժմ նա հանդիսանում ե
դիրեկտիվ կազմակերպչական-պլանավիճ ղե-
կավարող որգան։ Կոլխոզկենտրոնն իր ղե-
կավարությունն իրականացնում ե համա-
պատասխան կոլխոզմիությունների կամ
մյուս միություններին կից կոլխոզսեկցիա-
ների միջոցով։

IV. ԱՅԻԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՎԱՐ- ԱՄԲՈՒՄԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

1. ԽՆՉԳԻԹԻ ՊԱՇՄԱՆՆԵՐԻ ՊԵՏ Ե ԲԱՎԱՐԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ- ՄԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Այենից՝ առաջ պետք ե գտնել աշխատան-
քի կազմակերպման այնպիսի ձև, վոր կապահո-
վի տվյալ կոլխոզում աշխատանքի ավելի բարձր
արտադրողականությունն ու վորակը նրա նյու-
թական (արտադրության միջոցների) և բանվո-
րական ուժի հնարավորության սահմաններում։

Հասարակական աշխատանքի բարձր արտա-
դրողականությունն ինքնին միջոց ե հանդիսանա-
լու շրջապատի գյուղացիության համար՝ մտնելու
կոլխոզ, որին ակով ապացուցելուն բան համայնաց-
ված տնտեսության բոլոր առավելությունները
հանդեպ նրա մանր անհատական տնտեսության։

Աշխատանքի կազմակերպումը պետք ենաև
աշխատավելու կոլխոզի մեջ մասնագետ-
ներին և վարակյալ բանվորական ուժին, նաև
Շնեղինետե բարձրացնելով աշխատանքի պրոցես-
ումը յեղած բանվորական ուժի վորակը։ Աշխա-
տանքի կազմակերպումը պայմաններ ե ստեղծե-
լու կոլխոզներում յեղած ամբողջ բանվորական
ուժի ոգտագործման համար, վորը խոշոր չափով
կախված ե հենց տնտեսության կազմակերպու-
մից (տնտեսության ուղղությունը, ցանքսաշըր-
ջանառությունը, տնտեսության ճյուղերի կազ-
մակերպումը, տեխնիկական ձեռնաբարելումներ
և
այլն։)

Սրա հետ մեկտեղ անկարելի լե մոռացու-
թյան տալ կրթական հարցը։ Ապահովել արագ
և անընդհատ աճումը—նշանակում ե ապահովել
կոլխոզի անցումը գարզացման ավելի բարձր
աստիճանի, ստեղծել նրա համար ամուր պատ-
վանդան, վերջ տալ անդամների հեռացմանը և
այլն։ Այս հարցի վճռելը կախված ե վոչ միայն
աշխատանքի բարձր արտադրողականությունից,
այլև աշխատավարձի այնպիսի չափի կիրառու-
մից, վորը կաջակցի կուտակմանը՝ տնտեսու-
թյան մեջ։

Աշխատանքի կազմակերպումն ու վարձա-
տըությունը պետք ե կոլխոզի անդամների մեջ

այնպիսի փոխարաբերություններ կարգավորի վորպեսզի չառաջացնի մի անդամի շահագործումը մյուսի կողմից կամ առաջ բերի կոլխոզի ներսում նյութական անհավասարություն։ Ընդհակառակը, պետք է ձգտել սկզբում յեղած նըման անհավասարությունները վերացնելու։

Հարց. — Ի՞նչպես վարվիր։

Պատասխան. — Առաջին պալմանը հենց իրեն կոլխոզի լավ կազմակերպված լինելն է։ Այն կոլխոզում, վորի վարչակազմը լավ է, վորտեղ արտադրանքը լավ է կազմակերպված, ուր հաշվի յեն առնված իր շրջանի առանձնահատուկ պայմանները, հաշվի յե առնված և կանոնավոր ոգտագործվում ե բանվորական ուժը, վորտեղ մեծագույն չափով համաձայնեցված են արտադրական միջոցները և, վերջապես, տնտեսությունը տարվում ե միանդամայն պլանով, — նըման կոլխոզներում աշխատանքի ինչպես կազմակերպումը, նույնպես և վարձատրումը կարելի յե տանել լավ։ Իսկ այնտեղ, ուր բացակայում են այս պայմանները, աշխատանքի ճիշտ կազմակերպումն ել հնարավոր չե։

ԱՃԽՑԱՆՔԻ ԲԱԺՄԱՌՈՒԹՅՈՒՆ ԿՈԼԽՈԶԻ ԱՆԳԱՄՆԵՐԻ ՄԻՋԱՎ

Ցուցաքանչյուր կոլխոզ ունենալու յե իր արտադրական պլանը։ Այդ պլանով ել վորոշ-

ուժ ե, թե ինչքան բանվորական ուժ ե հարավոր արտադրության և լուրաքանչյուր ճլուղի ամար: Միաժամանակ լրիվ հաշվառման ե ինդարկիվելու կոլխոզում լեղած բանվորական ուժը: աշվառման լենթակա չեն մինչև 14 տարեկան երեխաները և ծերերը՝ 55-ից մինչև 60 տարեանները: Հաշվի չեն առնվելու նաև բոլոր աշխատանքի անընդունակները, վորոնք սկստք ե սպահովվեն կոլխոզի ընդհանուր միջոցներից: Յերեխաներն ու ծերերը կարող են ոգտագործել ավելի հեշտ աշխատանքներում:

Պահով նախառեսված բոլոր աշխատանքները բաժանվում են լերեք կատեգորիայի՝ մնառուն (ամբողջ տարվա ընթացքում), սեզոնային ժամանակավոր: Հետո տվյալ կոլխոզում անդրաժեշտ ամբողջ աշխատանքը բաժանվում ե նատանիքների վրա՝ ըստ իրենց աշխատող ձեռների քանակի: Այն կոլխոզներում, ուր աշխատանքի անընդունակների ապահովումը դեռևս ի անցկացված ընդհանուրի հաշվին, աշխատանքը ընտանիքների մեջ բաժանվում ե վոչ թե ըստ աշխատողների, այլ ըստ շնչերի:

Յուրաքանչյուր ընտանիքի վրա ընկած աշխատանքը կատարվում է տվյալ ընտանիքի աշխատունակ անդամների կողմից:

Նման բաժանման հետևանքով ստացվում ե

աշխատանքի ընդհանուր քանակ, վորն արտահայտվում ե աշխատանքի որերով, և վորը պարտավոր ե կատարել յուրաքանչյուր ընտանիք տարվա ընթացքում։ Այն աշխատանքը, վորը պահանջում ե վորոշ վորակավորում, անպայման կցվում ե հատուկ վօրակյալ աշխատողի նույնն ե արվում ամբողջ աարվա ընթացքում կատարվող աշխատանքների վերաբերյալ (ձիազաններ, պահապաններ և այլն)։ Ժամանակակից խոշոր գյուղատնտեսությունը չի կարող գոլություն ունենալ առանց աշխատանքի բաժննման, աշխատողների մասնագիտացման և վորակի բարձրացման։

Հնարավոր եր աշխատանքի բաժանում ընտանիքների միջև վոչ թե ըստ աշխատավորական որերի, այլ աշխատանքների արժեքների արտահայտությամբ (որինակ՝ ուուրլիներով)։ Այս դեպքում կկատարվեր աշխատավորների յիկամուտների լրիվ հավասարեցում։

Աշխատանքի հավասարաչափ բաշխումն աշխատավորների միջև բոլոր դեպքներում ել դորձագրելի չե, հաշվի առնելով կոլխոզներում յեղած վորակյալ ուժի անբավարար լինելը։

Եենթադրենք, վոր ընտանիքն ունի յերկու վորակյալ աշխատող (որինակ՝ վականագործ և հյուսն), վորոնց աշխատանքն ոչտագործվում ե

ամբողջ տարին։ Փոխարինել նրանց սւրիշ աշխատադիներով վոչ մի կերպ հնարավոր չե։ Հասկանալի լե, վոր այս ընտանիքին հասնող աշխատանքային որերի քանակը կարող ե լինել ավելի շատ, քան մյուս ընտանիքներինը, և նրա յեկամուտը կլինի շատ։

Աշխատանքի բաժանումն ավելի պարզ տիպի միավորումներում, վոչ լրիվ համայնացմամբ (որինակ հողովագործական ընկերություններում), կարող ե կտարարվել ըստ հողալին փայլի, ըստ աշխատադիների կամ ըստ շնչի։ Բաժանումը ըստ հողալին փայերի լոյն չափերով գործադրվում ե ձեքենա-տրակտորալին կայանների շրջաններում (Շեքչենկուլի անվան խորհրդային տնտեսության ձեռներեցությամբ)։ Համաձայն բաժանման այս ձեի, յուրաքանչյուր տնտեսություն պարտավոր ե տրամադրել բանվորական ուժի այնպիսի քանակ (վարձագնահատման արտահայտությամբ), վորն ըստ մասնատրման ընկնում ե նրա հողալին փայլն։ Բաժանման այս ձեի բացեցը հետեյալներն են՝

1. Այս ձեի կիրառման ժամանակ ընդուժվում ե, վոր տրտադրության մասնակիցն ե հանդիսանում ընտանիքը (ծուխը), այլ վոչ թե սովոր միավորման առանձին անդամը։ Սա կըհասցնի այն բանին, վոր հաւեմատաբար ավելի

ուռճացած տնտեսաթերերը փոխանակ իրենց
բանվորական ուժի կղերադասեն վարձու ուժը,
իսկ իրենց աշխատավոր ուժը կուղարկեն քա-
ղաք և կամ կգործադրեն իրենց անհատական
տնտեսության վրա։ Հետեւապես աշխատանքի
բաժանման այս ձեզ կիրառելիս կանոնադրու-
թյամբ պետք ե շեշտել ծխերի սեփական բան-
վորական ուժի գործադրումը։ Միայն շատ հար-
գելի դեպքում թույլ տալ վարձու ուժը։

2. Հողը (կամ հողային փայլ) այս ձեր
գործադրման դեպքում հանդիսանում ե յուրա-
քանչյուր տնտեսության յեկամտի աղբյուր, այլ
վոչ թե կոլեկտիվ աշխատանքի գործադրման
միջոց։ Այն շրջաններում, ուր դեռևս չի կա-
տարված հողաշինարարություն կամ հաղահավա-
սարեցում ըստ շնչերի թվի, բաշխման այս ձեն
ամրացնում ե հօդային անհավասարությունը։
Յեվ յեթե չի արգելվում վարձու աշխատանքը,
այն ժամանակ առանձին սոցիալական խմբավո-
րումների անհավասարությունը վոչ միայն չի
վերացվում, այլ ավելի յե ուժեղանում։

Կոլեկտիվ հողոգտոգործումն այս դեպքում
ավելի շատ ե հնարավորություն տալիս կուլա-
կացին ելեմենտներին ողտագործելու պետական
վարկն ու միջոցները։

3. Աշխատանքի բաժանման այս ձեր գոր-

ծագրումը դժվարացնում եւ պրոլետարական եւ-
լեռնաների սուտքը նման միավորումների մեջ,
վորոնք չունեն հող (բատրակներ, արդյունաբե-
րական բանվորներ, արհեստավորներ և այլն):
Նրանք դուրս են մնում և արդպիսով կարծեք
թե զրկվում են հողի նկատմամբ իրավունքներ
ունենալուց: Այս խմբակները գյուղում նախո-
րոք հող չեյին ստացած, վորովհետեւ կատարված
չեր հողհավասարեցում:

Յեխնելով այս բոլորից, պետք եւ ձգտել, վոր
պարզ կոլեկտիվ միավորումներ կազմակերպե-
լիս աշխատանքի բաժանումը կատարվի ըստ
շնչերի: Իսկ յեթե անաշխատունակների գոյու-
թյունն ապահովված եւ կոլխոզի միջոցներից,
հնարավոր ենաև աշխատանքի բաժանումը ըստ
աշխատողների: Ծայրահեղ դեպքում, յերբ հնա-
րավոր չե այս միջոցի անցկացումը եւ բաշ-
խումը, վոր լինում եւ ըստ հողային փայերի,
պետք եւ կանոնադրությամբ ապահովել բատրակ-
ների և բանվորների մասնակցությունը նման
միավորումներով:

3. ԽՆՎՈՐԿԱՆ ՈՒԹԻ ԲԱՑՈՒՄՆ ՈՒ ԿՈԶՄՈՆԹՊՈՒՄՆ ՀՍՏ ՑՆՑԵՍՈՒԹՅԱՆ ԾՐՑՆՉԻՆ ԺՇՈՒՂԵՐԻ

Բանվորական ուժի բաշխումն ըստ տնտե-
սության ճյուղերի փոքր կոլխոզներում դժվար

չեւ Այս հարցը բարդանում եւ մեծ կոլխոզներում։

Խոշորագույն, 4—5 հազար հեկտարից ավելի տարածություն ունեցող կոլխոզները պետք եւ բաժանվեն առօնձին մասերի։ Այդ մասերի չափսը կախված եւ դանաղան պայմաններից՝ հողի մակերեսից, նրա վորակից, կիրառվող ցանքսաշրջանառությունից եւ այլն։ Համենայն գեպս այդ մասերի մեծությունը վորոշ չափսի յև լինելու, այն հաշվով, վոր հնարավոր լինի ամեն մի մասի վրա ոգտագործել մի փոքր տրակտորային ջոկատ (վոչ պակաս 1000 հեկտարից)։

Այս գեպըում իբենց աղդեցությունն են ունենալու նաև կոլխոզի շրջանում գտնված գյուղերը։ Քանի զեռ կազմակերպչութեն կոլխոզը չի ամրապնդվեր քանի տվյալ շրջանում զեռնս չեն ընդգրկված կոլխոզում բոլոր տնտեսությունները (բացի կուլտակայիններից), կոլխոզի աարածության բաժանումը ըստ մասերի դժվար եւ Պիտի կատարել միայն հողաշինարարություն, միացնելով եւ առանձնացնելով կոլխոզի հողամասերը։

Խոշոր կոլխոզը վերջնական ձևավորում եւ ստանում միայն այն ժամանակ, յերբ կատարվում եւ շրջանի համատարած կոլխոզի վայում։ Այս գեպըում արդեն խոշոր կոլխոզը հնարավո-

բություն և ստանում լայն ծավալելու իր շինարարական և մնացած բոլոր աշխատանքները։ Այս բոլորի հետ միասին ել կոլխոզը հնարավորություն և ստանում իր հողային տարածությունը բաժանելու առանձին մասերի։

Կոլխոզի վարչության կողմից յուրաքանչյուր մասի (участок) վրա նշանակվում է վարիչ։ Մասերի վարիչները կազմակերպում են բանվարական բրիգադներ։ Բրիգադների կազմը փառաշինում է նրանց աշխատանքի ընույթով և պայմաններով։ Դաշտային աշխատանքների ժամանակ, յեթե մատակալում չկան բնակավայրեր, կազմակերպվում են կայան, ուր դրվում են վրաններ, խոհանոց, դաշտալին պահեստներ և այլն։

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎՐԹԱԿԱՆ ԳՆԱՀԱՅՈՒԹՅ (ՅՈՒԹԱԿԱՑՄԱՆ)

Աշխատանքներն ստանում են տարբեր գնահատում՝ ըստ իրենց վորակի։ Աշխատանքային որվա միատեսակ վարձատրությունը, առանց նրա ընույթի հետ կազ ունենալու, չպետք ե թուլատրվի։

Միատեսակ վարձատրությունը կհասցնի ծանր և անդուրեկան աշխատանքներից խուսափելուն և վորակալ ուժերի ու մասնագետների հեռացմանը կոլխոզից։

Բոլոր աշխատանքներին ու աշխատողները
յենթակա յեն տարբեր գնահատման, յելնելով
այս կամ ույն աշխատանքի բնույթից։ Դրան կա-
րելի է հասնել աշխատանքների կամ աշխատող-
ների տարիֆիկացիայի միջոցով։ Աշխատանքնե-
րի տարիֆիկացիայի համար գործադրում են
կարգեր (разряды):

Կարգերը (կամ ցանցը) կարող են լինել 4,
5, 6 և ավելի (մինչև 9-ը): Այստեղ պետք է
հաշվի առնել աշխատանքների շերտավորումը:
Վորքան շատ են կարգերը, այնքան ավելի շատ
շերտավորում կարելի է մտցնել աշխատանքնե-
րի մեջ։ Խոշոր գլուղատնտեսական արտադրու-
թյունը բարդ աշխատանքներով, արտադրության
զարգացած ճյուղերով, բարձր տեխնիկալով, հե-
տևապես հասարակական աշխատանքի մեծ բա-
ժանումով, պահանջում ե ավելի շատ կարգեր
(մինչև 9-ը): Փոխհարաբերությունն առաջին և
վերջին կարգերի միջև կարող ե լինել $1\frac{1}{2}$, 2,
3, $3\frac{1}{2}$ և այլն:

5. ԲԱՆՎԱՐՄԱՆ ՈՐԾ

Բավականաչափ բանվորական ուժ ունենա-
լու դեպքում կոլխոզում բավական ե ունենալ
8-ժամյա բանվորական որ:

Միայն բերքի հավաքման, գարնան վարի

ու ցանքսի շրջանում բանվորական որը յերկարացվում է մինչև 10 ժամ։ Թանդարժեք բարեմերքնաների լրիվ չափով՝ ուղագործման անհրաժեշտության դեպքում պետք է կազմակերպել հերթականություն (յերկու և յերեք հերթ)։ Աշխատանքի հերթային սխստեմին անցնելը պահանջում է բավականաչափ վորակյալ ուժեր։ Վորակյալ ուժի ստկավությունը գեպքում հնարավոր է սրանց աշխատանքի ժամերի յերկարացում համապատասխան վարձատրությամբ։

Մի շարք կոլխոզներում բանվորական որը չի չափավորված։ Նրա տեսղությունը վորոշվում է տվյալ աշխատողին հանձնած գործի համար մեկ որում կատարելու ժամանակի պահանջով։ Այս դեպքում աշխատողները շատ վարձ ստանալու համար շատ ժամեր են աշխատում։ Խոշոր գյուղասննեսական արտադրության պայմաններում նման կարգը աննպատակահարմար է։ Աշխատանիք պետք է բոլոր աշխատողների նամար սկսվի ու վերջանա միաժամանակ։ Կոլխոզներից 10 ժամից ավելի տեսղությամբ բանվորական որ, առավել ևս ռարեածադից մինչև արեամուտա չպետք է թուլլատրվի։

6. ԱՐՑՈՒՐԱՆՔԻ ՆԱՐԴԱՆԵՐԸ

Յուրաքանչյուր աշխատողի աշխատանքի արտադրողականությունը բանվորական որվա

ընթացքում կարգավորվում ե արտադրանքի նորմայով՝ պարտադիր ամեն մի աշխատողի համար։ Արտադրանքի նորմայի չկատարման դեպքում աշխատանքի վարձատրությունը պակսեցվում ե։ Ընդհակառակը, աշխատանքային որվաընթացքում արտադրանքի նորմայի բարձրացման դեպքում, պահպանելով համապատասխան պահանջվող նորման, աշխատանքի վարձատրությունն ավելացվում ե։

Արտադրանքի նորման պետք ե անպայման մշակված լիսի բոլոր կոլխոզներում, հաշվի առնելով տվյալ կոլխոզի բնական պայմաններն ու նրա արտադրության միջոցները։ Պետք ե այս դեպքում ել դուրս գալ ուժժամյա բանվորական որից։ Արտադրանքի նորման տնտեսությունը պլանաշափ տանելու և աշխատանքի արտադրողականության բարձրացման հիմնական պայմաններից մեկն ե։

7. ՊԱՅՔԱՐ ԱՇԽԱՏՈՒՔԻ ՎՈՐՈԿԻ ՀԱՄԱՐ

Աշխատանքի վորակի հարցը վորոշվում յերկու ուղղությամբ՝ 1) վարձատրության կըրճատումը, աշխատանքի անբավարար կատարելու համար, յեթե նույնիսկ նորման կատարված լինի $1/2$ և $1/4$ չափով (շտրաֆ). 2) բարձրացրած վարձատրության աշխատանքի համար,

յեթե նորման կատարված և լրիվ չտփով կամ
հավելումով, միաժամանակ պահպանելով աշխա-
տանքի բարձր վորակը (սլարդեատրում): Պար-
գևատրման ձեզ շարաֆի հետ միաժամանակ գոր-
ծադրվելու յե բոլոր կոլխոզներում: Պարզեատրը-
ման համար հիմնվելու յե հատուկ ֆոնդ: Պար-
զեատրումը կարող է լինել ինչպես անհատա-
պես, նույնպես և կոլխիկորեն-խմբակալին:

Եատ կարենոր ե, վոր առաջին հերթին մը-
շակիվի պարզեատրման խնդիրը արակտորիստնե-
րի նկատմամբ (աշխատանքի վորակի, վառելա-
նութի խնայողաբար ծախսման համար և այլն):
Նույնը պետք է անել բարդ մեքենաների վրա
մրւսա աշխատողների վերաբերյալ:

Ամեն մի կոլխոզում պետք է կազմակերպ-
վի հսկողություն կոլխոզի անդամներին հանձ-
նարարված աշխատանքի ինչպես կատարման,
նույնպես և վերջացած աշխատանքն ընդունե-
լիս: Այդ ֆունկցիաները դրվելու յեն ավագ-
բանվորների, բրիգադների և տնտեսության
ճյուղերի վարիչների վրա:

Այս անձնավորությունները հսկում են աշ-
խատանքի դուրս գալու, արտադրանքի նորմայի
կատարման, կատարված աշխատանքի վորակի,
գործիքների պահպանման, բանվորական որվա-
տեղության վրա և այլն: Նրանք ել տանում
են կատարվող աշխատանքների հաշվառումը:
Այս դեպքում ել գործը պետք է տանել այն-

պես, վոր զեղծարարություն, խնամություն, սառն վերաբերմունք և այլն տեղի չունենան:

Ցեթե կոլխոզի անդամն առանց հարգելի պատճառի գործի չդնա, նա վոչ միայն զրկվում ե բաց թողած որվա վարձատրությունից, այլև տուգանվում ե իր մեկ որվա ստանալիք վարձատրության չափով:

8. ԱԹԽԱՏԱՆՁԱՑԻՆ ԿԱՐԴԱՊՇՈՒԹՅԱՆ

Աշխատանքային կարգապահության հարցը շատ հիվանդութ ինդիք ե համարյա բոլոր կոլխոզների համար: Գյուղացին մտնելով կոլխոզ, իր հետ բերում ե անհատական տնտեսության հետ կապված այնպիսի սովորություններ, վորոնք հակադրվում են խոշոր և կենտրոնացած գյուղատնտեսական արտադրությանը—չցանկանալ լենթարկվելու ընդհանուր կանոններին, ինքնակամություն, անարխիզմ:

Ի՞նչ պետք ե անել աշխատանքային կարգապահության բարձրացման համար:

Աշխատանքի ճիշտ կազմակերպումն ինքնին բավականաչափ ուժեղ սիջոց ե՝ ճնշում գործ դնելու կոլխոզի ամեն մի անդամի վրա՝ նրա կարգապահությունը բարձրացնելու դործում: Ընդհանակառակը, աշխատանքի անկազմակերպվածությունն առաջացնում ե անկարգապահու-

թլուն և անպատասխանատվություն։ Կարգապահության բացակայությունը քայքալիչ դեր ե խաղում նաև նրանց նկատմամբ, ովքերը բարեխիղճ և կանոնավոր կատարում են իրենց վրա դրված պարտականությունները։

Կոլխոզի բոլոր անդամների նկատմամբ խրախուսական և պատժիչ միջոցների գործադրումը՝ բարոյական (գովասանք, նկատողություն, հասարակական պարսավանք և այլն) և նլութական (սլարգեատրում, տուգանք, կոլխոզից հեռացնել) — իրենց հերթին կնպաստեն աշխատանքային կարգապահության բարձրացմանը։ Անհրաժեշտ ե ամեն մի կոլխոզում մշակել ներքին կարգապահության կանոններ, վորոնցով վորոշվելու յին կոլխոզի յուրաքանչյուր անդամի աշխատանքային պարտականությունները։

Դաստիարակչական աշխատանքի զարգացումը կոլխոզի անդամների մեջ ունի բացառիկ կարևոր նշանակություն, իբրև միջոց աշխատանքային կարգապահության և արտադրողականության բարձրացման։ Դաստիարակչական աշխատանքը բարձրացնում ե կոլխոզի յուրաքանչյուր անդամի գիտակից վերաբերմունքը հանդեպ կոլեկտիվ արտադրության, զարգացնում ե նրանց մեջ պատասխանատվության զգացմունքը, ուժեղացնում ե համախմբվածությունը և այլն։

Այս տեսակետից պետք է հատուկ ուշադրություն դարձնել կոլխոզների արտադրական խորհրդակցությունների, սոցիալխոտական մըրսման, արտադրական զրույցների և գասախոսությունների վրա:

Կոլխոզային գրականությունը մարտական դիրք է բռնելու աշխատանիքային կարգապահության յեվ արտադրողականության նարգերում։ Անխնա պայմար է նայտարարվելու պրոգուներին, ծուլության, հարբեցողության, ինքնակամության, վճառարարության յեվ այլն։

Կոլխոզի յուրաքանչյուր կազմակերպիչ պետք է իւանա, վոր կարգապահությունը կոլխոզներում կուժեղանա վոչ այնին պատժիչ միջոցների գործադրումով, վորքան յեվ զիսավորապես դաստիարակչական աշխատանքների և աշխատանքի կազմակերպման միջոցով։

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՏՎԱԼԻՄԸ

Աշխատանքի պաշտպանման ինդիքը նույնպես կարեոր է կոլխոզի համար։ Այս հարցը կարեոր պայման է նաև աշխատանքի ճիշտ կազմակերպման և կոլխոզի նորմալ ընթացքի համար։

Կոլխոզների մեքենայացման աճումը հատկապես ավելի յե սրում մեր ուշադրությունը դեպի աշխատանքի պաշտպանության հարցը։

Նատ դժբախտ պատահարներ կանխելու համար հենց սկզբից ել պիտի զբաղվել այս հարցով։ Հենց այժմյանից պետք ե վորոշ մինիմում մշակել կոլխոզներում աշխատանքի պաշտպանման և մաքրության վերաբերյալ։ Իսկ այս բոլորի համար անհրաժեշտ ե նախատեսել վորոշ միջոցներ։

Ժամանակն ե որենսդրական կարգով կարգավորել աշխատանքի պաշտպանման հարցը կոլխոզներում։ Պետք ե կոլխոզներում արգելել 14-ից ցած տարիք ունեցողների աշխատանքը։ 14 ից 18-ը տարեկանների աշխատանքի որվաժամերը պակաս են լինելու, քան մեծերինը։

Այն կանալք, վորոնք տանում են ֆիզիկական աշխատանք, ծննդաբերությունից յերկու ամիս առաջ պետք ե փոխադրվեն թեթև աշխատանքի, իսկ մի ամիս առաջ բոլորովին ազատվեն։ Նույնը և ծննդաբերությունից հետո։

Նպատակահարմար ե սահմանել կոլխոզի աշխատող անդամների համար տարեկան մեկ անգամ արձակուրդ—15-ից մինչև 30 որ տևողությամբ *):

*.) Այս հարցը հատուկ քնության նյութ ե դառնալու մեջանում։ Նկատի պետք ե ունենալ մեր կոլխոզնիկների աշխատանքային քիչ ծանրաբեռնվածությունը մմեռվա տմիսներին։ Ծ. Թ.

Անհրաժեշտ ե սահմանել նաև արտհագուստ
դռնե մեքենաների վրա աշխատողների համար:

Խոշոր կոլխոզներին, խմբակային միություններին և կոլխոզ շրջմիություններին կից կարեոր ե վոր կազմակերպվեն աշխատանքի պաշտպանության կոմիսարներ: Ժամանակն ե, վոր կոլխոզի ենտրոպնը զբաղվի այս հարցով և մշակի այդ կոմիսարների մասին կանոններ:

10. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՖԱՎԱՐԻ ՄԵԽԱՅՈՒՄԸ ԿԱԼԵԽՁԵՐԱՒՄ (трудоемкость)

«Ավելորդ» բանվորական ձեռքերի գոյությունն անհատական տնտեսություններում հետևանք ե անտեսության անկազմակերպ լինելուն, չքավորական անտեսությունների մեծագույն մասի զուրկ լինելուն աբտադրական միջոցներից և մի շաբթ ուրիշ պատճառների: Գյուղացիական տնտեսությունների միացումը կոլխոզներում հնարավորությունն ե տալիս գործադրել մեքենաներ, կազմակերպել տնտեսությունը: Սրա հետևանքով վոչ միայն գործադրումից դուրս են մնում յեզն ու ձին, այլև վորոշ բանվորական ձեռքեր: Յեվ կոլխոզշինարարության սկզբնական շրջանում կոլխոզներում մնում են բավականաշափ «ավելորդ» աշխատող ձեռքեր: Բանվորական ուժի ավելցուկը սովորական յերեսությ ե համարյա բոլոր կոլխոզներում:

Մի շարք կոլխոզներում բանվորական ուժն
ոգտագործվում է միայն $40-50^{\circ}/_0$ -ով։ Այս
դրությունը միանդամայն անձեռնտու լի ինչ-
պես կոլխոզի, նույնպես և նրա անդամների հա-
մար։ Ավելորդ ձեռքերն այս դեպքում վերած-
վում են միայն «շնչերի», սպառում են, բայց
արտադրության մեջ մասնակա ություն չունեն։

Դուցել լինեն այնպիսիները, վոր առաջար-
կեն «ավելորդ» ձեռքեր չունենալու համար հրա-
ժարվել մեքենաներից։

Հարցի նման դրումը միտնգամայն սխալ
է յեվ վեճառակար։

Մնայուն կապիտալի աճումը փոփոխական
կապիտալի նկատմամբ հանդիսանում է հիմք
սոցիալիստական տնտեսության տեխնիկական
առաջադիմության համար։ Մյուս կողմից մեքե-
նաների դրաժադրումը համայնացված և խոշորա-
ցած տնտեսության մեջ ստեղծում է նորանոր
արժեքներ։ Աշխատանքի արտադրողականության
հետ միասին բարձրանում է նաև բերքատվու-
թյունը։

Միաժամանակ ոլետք եւ հաշվի առնել նաև
այն, վոր բանվորական ուժի ավելցուկը ժամա-
նակավոր յերկույթ եւ կոլխոզների համար։ Նը-
րանց ուժեղացման հետ մեծանում են սոց. կու-
տակումը։ Կոլխոզները հնարավորություն են

ստանում տանելու ծավալած աշխատանք։ Ան-
շուշտ պահանջվելու լեն նորանոր աշխատող
ձեռքեր։

«Ավելորդ» բանվորական ուժը ներկայումս
հանդիսանալով բեռ, միաժամանակ աղբյուր և
հետագա ուժեղ տճան և տվյալ կոլխոզի ար-
տադրական ուժերի զարգացման։

Համենայն դեպս ներկայումս բոլոր կոլխոզ-
ների համար ավելորդ բանվորական ուժի գոր-
ծադրումը կարեռը հարց ե։ Հաշվի պետք ե առ-
նել նաև այդ «ավելցուկի» սեզոնային բնույթը՝
ձմեռն ավելի շատ, իսկ ամառը՝ քիչ։

Ի՞նչ պետք ե անել։

1. Մեծագույն չափով համայնացնել արտա-
դրաբան բոլոր միջոցները.

2. Դաշտավարության մեջ սև հերկի ձերից
անթնել խոտադաշտի ձեին։

3. Ցանքսաշրջանառության մեջ ուժեղաց-
նել աշխատանքածավալ կուլտուրաները.

4. Զարգացնել անասնաբուծությունն ու
անտեսության մյուս ճյուղերը (բանջարաբու-
ծությունը, այգեղործությունը, թոշնաբուծու-
թյունը և այլն)։

5. Զարգացնել կոլխոզների մթերքների աել-
նիկական վերամշակումն ու սպասարկումը շըր-
ջապատի անհատական տնտեսությունների (կոլ-
խոզը վերածել կոմբինատի)։

6. Կոլխոզներին կից զարգացնել արհեստագործական և տնայնագործական արհեստանոցներ:

Այս բոլոր միջոցներն, իհարկե, պահանջում են հիմնական կապիտալ: Այստեղից ել յեզրակացություն: Կոլխոզների հենց միջոցներից ել պետք եւ ուժեղացնել նըանց հիմնական կապիտալը:

Կոլխոզները կարող են իրենց ավելորդ ձեռքերն ոգտագործել հասարակական տնտեսական նշանակություն ունեցող ձեռնարկություններում (առուների անցկացում, ճանապարհների անցկացում և նորոգում, նոր հողամասերի յուրացում, վորոնք հաճախ խոշոր աշխատանք են պահանջում):

Ա: Քաժեշտ եւ ուշադրություն դարձնել կանացի աշխատանքի լրիվ ոգտագործման վրա: Բացի կանոնավոր կենցաղային գրություն ստեղծելուց (մսուրներ, ճաշարաններ, լվացարաններ և այլն), պետք է կազմակերպել տնտեսության այնպիսի ճյուղեր, վորոնցում ավելի շատ ե գործադրվում կանացի աշխատանքը՝ թոշնարուծություն, անասնաբուծություն, պտղաբուծություն և այլն:

Բանվարական ուժի վարձում կոլխոզներում քույլատելի յե միայն այն դեպքում, յեթե այս կամ այն աշխատանքի արտադրանի համար իր

բանվրական ուժը չի բավականացնում (որինակ՝ բերքի հավաքման շրջանում), կամ յեթե տվյալ աշխատանքը հնարավոր չի կատարել իր անդամների միջոցով՝ համապատասխան վորակավորման բացակայության հետևանքով (Չինացարական աշխատանքներ, գործիքների վերանորոգում և այլն):

Իսկ ինչ վերաբերում ե կոլխոզից դուրս գանազան տեղեր աշխատանքի գնալուն, պետք ե պարզ լինի, վոր բոլոր աշխատողները գըտնը վում են կոլխոզի խորհրդի տրամադրության տակ, և վոչվոք չի կարող առանց նրա թուլլովության թողնել և գնալ աշխատանքի կոլխոզից դուրս:

11. ԱՅԻՍՏԱՆՔԻ ՎԱՐՑԱՑՐՈՒՄԸ

Աշխատանքի վարձաարումը պետք ե հանդիսանա կոլխոզի լուրաքանչյուր անդամի յեկամը միակ աղբյուրը: Իսկ ինչ վերաբերում ե կոլխոզի կողմից ստացված յեկամին, նրանք գնում են համայնացված արտադրության միջոցների ուժեղացման ֆոնդին, ծախսվում են կուլտուրական, կենցաղային, շինարարական և այլ նպատակների համար: Ոգուտների բաշխումը կատարվում ե տարեվերջին, համաձայն գոյություն ունեցող կանոնների և կոլխոզի անդամների ընդհանուր ժողովի վորոշման:

Համենայն դեպս, կոլխոզի լուրաքանչլուր անդամ շահագրգոված պետք ե լինի իր կոլխոզի ուժնեղացնամը, համայնացված միջոցների մեջմամբ:

Կոլխոզներում աշխատանքի վարձատրման չափը պետք ե լինի այնպես, վորպեսզի կոլխոզի անդամն ապրի վոչ թե վատ, այլ ավելի լավ, քան միջակ գյուղացին իր անհատական տնտեսության մեջ։ Համենայն դեպս պետք ե ստեղծել այնպիսի դրություն, վոր գյուղացու լինելը կոլխոզում որինակ դառնա մյուսների ներգրավման համար և վոչ թե յեղածների լել հեռացման։

Աշխատանքի վարձատրման հիմնական խընդիրն ե՝ վորոշել տարիֆային ցանցով ընդունված առաջին կարգի դրույքը։ Այս հարցը լելակետ ե հանդիսանում աշխատանքի վարձատրման բոլոր խնդիրների լուծման համար։

Աշխատանքի վարձատրումը կոլխոզներում լինում ե բնականով, խառն և դրամական ձևով։ Ամենից շատ տարածված ե խառն ձեր (դրամ + բնական)։ Կոլխոզներում ապրանքայնության ավելացման շահերի տեսակետից անհրաժեշտ ե կոլխոզի ներառում վերջ տալ ամեն տեսակի բնական փոխհարաբերություններին և անցնել դրամականին։ Մակայն այդ ներկայումս հնարավոր

չե լրիվ կիրառել, շնորհիվ կոլխողների շրջանառու միջոցների սղության:

Կոլխողների անդամների համար նախատեսված սպառողական մթերքները բաց են թողնըվելու նրանց ինքնարժեքով կամ մոտակա կոռպերատիվի գներով:

Անհրաժեշտ ե բոլոր կոլխողներում այնպիսի կարգ սահմանել, ըստ վորի աշխատավարձը մինչ մթերքների վաճառումը և անտեսական տարվա արդյունքների մինչ լրիվ պարզելը, չըտրվի ամբողջ ամսվա համար լրիվ, այլ բաց թողնվի հասանելիքի $50 - 60\%$ ՝ Վերջնական հաշվետես կատարել միայն տվյալ տնտեսական տարվա վերջին: Կոլխողում յեղած բատրակներին բաց թողնվելիք ավանսը կարող ե կազմել ամսական իրենց հասանելիք գումարի մինչև 80 տոկոսը:

12. ԱԹԽԱՑԱՆՔԻ ՅԵՎ ԱԹԽԱՑՎՈՐՆԵՐԻ ՀԱՅՎԱՐԱՒՄԸ ԿՈԼԽՈԶ-ՆԵՐԻՒՄ

Աշխատանքի ճիշտ կազմակերպման համար հիմք ե ծառայելու կոլխողներում աշխատողների և նրանց աշխատանքի ճիշտ և լրիվ հաշվառումը: Յուրաքանչյուր կոլխողում, արտադրական պլանի հիման վրա, պետք ե կազմել բանվորական ուժի ոգտագործման ծրագիրն ըստ սեղոնների: Տնտեսության ճյուղերի վարիչներն ստու-

լում են որտեղան պատվերների կառարումը քանակավես և վորակապես, տանում են աշխատանքի գրանցում, վորի հիման վրա յել տարվում և կոլխոզի աշխատանքների դիրքը:

13. ԱԹԽԵՑՈՒԹԻ ԳԻՑԱԿՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՅԼ

Խոշոր կոլխոզների կազմակերպումը, նըրանց տեխնիկական սպառագինման անընդհատ աճումը հերթի յեն դնում աշխատանքի գիտական կազմակերպման հարցը, սաեղծելու հատուկ բջիջներ - տարիֆ-նորմային բյուրո, վորին և պետք ե հանձնարարել լուծելու արտադրության և աշխատանքի կազմակերպման հետ կապված մի շարք հարցեր։ Նման բյուրո առաջին հերթին պետք է կազմակերպել կոլխոզկենտրոնին կից։

Վ. ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՎՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՅԼ

1. ԱՐՅՈՒԹՔԱԿԱՆ ԽՈԲՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ

Յուրաքանչյուր կոլխոզին կից կազմակերպում են արտադրական խորհրդակցություններ։ Սրանք շատ կարևոր միջոցներ են՝ մասնակից դարձնելու կոլխոզային լայն ժամանակները սոցիալիստական տնտեսության շինարարության բոլոր խնդիրներին։ Արտադրական խորհրդակ-

ցութլունների աշխատանքներն ունեն կարևորագույն նշանակություն, և նրանց զեկավաբման վրա դարձվելու լեռ հատուկ ուշադրություն:

Խոշոր կոլխոզներում արտադրական խորհրդակցություններ կազմակերպվում են ինչպես ամբողջ տնտեսության, նույնպես և առանձին ճյուղերին կից:

Արտադրական խորհրդակցությունները ղեկավարվում են կոլխոզների վարչությունների կողմից — արտադրական հանձնաժողովների միջոցով: Կոլխոզների վարչություններն ակտիվ և ձեռներեց ընկերներից առաջադրում են իրեն արտադրողական հանձնաժողովի անդամներ և ներկայացնում են կոլխոզի անդամների ընդհանուր ժողովին ի հաստատություն: Արտադրական հանձնաժողովի նախագահը լինում ե վարչության անդամներից վորեե մեկը: Այս կոմիսիան ղեկավարում ե տվյալ կոլխոզի արտադրական խորհրդակցության բոլոր աշխատանքները և տալիս ե համապատասխան ցուցմունքներ:

Արտադրական հանձնաժողովի բոլոր վորոշաւմներն անցնում են կոմիսարիալով և հանձնարարվում կոլխոզի վարչությանը՝ իկատար ածելու: Յեթե վարչությունը համաձայն չի լինում վորեե հարցում, տարածայնությունը փո-

խաղը վում ե ընդհանուր ժողով, վորի վորոշում-ներն արդեն պարտադիր են կողմերի համար:

2. ՍՊԾԻԱՀԻ ԽՈՎԱԿԱՆ ՄՐՑԱՅՐ ԿՈՎՈՉՈՒՄ

Սոցիալիստական մրցումներն ունեն խոշորագույն տնտեսական-քաղաքական նշանակություն և պետք է անցկացվեն կոլխոզինարարության ամբողջ ցանցում:


Սոցմրցում կարող ե կազմակերպվել կոլխոզների միջև, կոլխոզների և խորհրդային ազնականությունների, գործարանների և մոտակագլուղարապահական ընկերությունների միջև։ Սոցմրցման հաջողությունը կախված է ինչպես նախապատրաստական, նույնպես և վողջ կազմակերպչական աշխատանքից։ Պետք է մասսայական և մանրամասն քննության դնել մըրցման պայմանագրերը, տվյալ կոլխոզի կողմից հանձն առանց պարտավորությունը։ Կոլխոզի յուրաքանչյուր անդամ իրեն պատասխանատու յեղանակում պայմանագրի լրիվ կատարման համար։

Արտադրական կոմիսսիաները պետք ե բրիգադներ կազմակերպեն՝ ստուգելու մրցման հետևանքները, միջոցներ գտնեն լեռ մնացածներին հասնելու և այլն։


Կոլխոզներում սոցմրցման պայմանագրերի հիմնական պայմաններն են լինելու՝

1. Հացի ժամանակին և լրիվ հանձնումը պետության:
2. Ծրագրված արտադրական պլանի կենսագործումը:
3. Աշխատանքի արտադրողականության բարձրացումը:
4. Ավելի շատ կռւտակում, վորը լոյնացնելու յե համարնացված տնտեսությունը:
5. Կոլխոզի անդամներից վորակյալ բանվորական ուժ պատրաստելը:
6. Իր բանվորական ուժի պահեստի մասի ավելի շատ և ավելի նպատականարմար ողափորձումը:
7. Բատրակների ներգրավումը կոլխոզում:
8. Կոլխոզի վերակառուցող ազգեցությունը շրջանի գյուղացիական ազգաբնակչության վրա (չքավորության ոգնելը, արտեխների կազմակերպումը, ազրութելինիկական ոգնությունը և այլն):
9. Հասարակական կենցաղային պայմանների լավացումը կոլխոզում (հասարակական սնունդ, բաղնիք, լվացարան, մսուր, բնակարան և այլն):
10. Կուլտուր-լուսավորական և բաղադական-դաստիարակչական աշխատանքը (դպրոց, ակումբ, ուսդիո, կինո, գրադարան, պուտիթերթ և այլն):


Սոցմրցման նվաճումների արդյունքները նպատականարմար ե պարզեատրել.



1



Հայաստան, ՎԵՐԱ ԱՐԵՎԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ



Հայաստան

ԽՄԴՀԿ և ԽԿԿՀԿ Խնդրացուն թագավոր
ՔԵՐՈՎՈՒ և ԾՄԿԴ

ԽԱՀՄԱՅԻ ԳՈՅԾ ՀԱՅԱՍՏԱՆ
0591-5

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038353

(104)

ԳԻՒԸ 7 ԿՈԹ. ՄՌԱ. (1^½, մամաչ)

A 1
3724



Ա. Կազակով

Вопросы управления, организации и оплаты
труда в колхозах

Госиздат СССР Армении
Эревань—1930